Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կարծիքը և առաջարկությունները

«Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից 2019 թվականի մայիսի 27-ին էլեկտրոնային փոստով ուղարկված «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) և հիշյալ որոշումը ընդունելու հիմնավորումները (այսուհետ՝ Հիմնավորում), հայտնում են հետևյալը. հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և այլ շահագրգիռ կողմեր ակտիվ քննարկում են Հայաստանում հակակոռուպցիոն անկախ մասնագիտացված մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, **առաջարկում ենք** դիտարկել **նոր հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ չձևավորելու հնարավորությունը**, և հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունների մշակման լիազորությունը **վերապահել նոր ստեղծվելիք հակակոռուպցիոն անկախ մասնագիտացված մարմնին**:

Այդուհանդերձ, եթե սույն առաջարկը ընդունելի չէ, ստորև ներկայացնում ենք Նախագծի վերաբերյալ մեր դիրքորոշումն ու առաջարկությունները, և գտնում ենք, որ այն նախատեսում է թերի կարգավորումներ և առանց դրանց վերացման չի կարող ապահովել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) բնականոն և արդյունավետ գործունեությունը: Նախագծի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ևս թերի են, և փաստացի, չեն հիմնավորում Նախագծով նախատեսված փոփոխությունների իրականացման նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը:

Մասնավորապես, Հիմնավորմամբ նշված է.

«Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել ***սահմանադրական և օրենսդրական էական փոփոխություններ, այդ թվում նաև հակակոռուպցիոն ոլորտում****, ինչպես նաև հաշվի առնելով* ***ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը կոռուպցիայի դեմ պայքարը ուժեղացնելու և արդյունավետ համակարգելու հակակոռուպցիոն քաղաքականությունը, անհրաժեշտություն է առաջացել*** *ձևավորել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ) ՀՀ վարչապետի գլխավորությամբ՝ նախկին Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի փոխարեն:»*

Ինչպես նկատում ենք, հիշյալ Նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է.

Ա. կատարված **սահմանադրական և օրենսդրական էական փոփոխություններով**,

Բ. ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությամբ՝ **կոռուպցիայի դեմ պայքարը ուժեղացնելու և արդյունավետ համակարգելու հակակոռուպցիոն քաղաքականությունը:**

Այսպիսով, ելնելով ներկայացված հիմնավորումներից, ենթադրվում է, որ Խորհուրդ ստեղծելու որոշումը պետք է **<u>արմատապես տարբերվի</u>** ներկայումս գործող *(սույն Նախագծի ընդունումից ուժը կորցրած է ճանաչվելու 2015 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» և 2015 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացվող մրցույթի և ռոտացիայի կարգը սահմանելու մասին» ՀՀ վարչապետի որոշումները)* Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդից: Այդուհանդերձ, Նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Նախագծում և ներկայումս գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում **որևէ էական փոփոխություններ առկա չեն**, որոնք, առաջինը՝ պայմանավորված կլինեն **օրենսդրական և սահմանադրական փոփոխություններով**, երկրորդը՝ կարտահայտեն Կառավարության անբեկանելի ցանկությունը՝ ուժեղացնել **կոռուպցիայի դեմ պայքարը և արդյունավետ համակարգել հակակոռուպցիոն քաղաքականությունը:** Ավելին, **<u>Կոալիցիան որակում է սույն Նախագիծը որպես հակակոռուպցիոն պայքարից «մեկ քայլ հետ»</u>** ստորև նշված հիմնավորումներով:

1. Սահմանափակվում են ՀՀ արդարադատության նախարարության լիազորությունները, և նախարարությունը չի իրականացնելու Խորհրդում ՀԿ-ների ներգրավման գործընթացը կազմակերպելու և համակարգելու աշխատանքը:

Այս փոփոխության մասով, թերևս, չկան հստակ հիմնավորումներ, թե ինչպիսի՞ սահմանադրական և օրենսդրական էական բարեփոխումների արդյունքում է առաջացել այն փոփոխության անհրաժեշտությունը: Ավելին, համաձայն 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Կառավարության կառուցվածքի և գործունեության կարգի մասին» ՀՀ օրենքի Հավելվածի 3-րդ կետի՝ ***«Արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության, այդ թվում՝*** *հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության,* ***հակակոռուպցիոն*** *և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում* ***Կառավարության քաղաքականությունը,*** *ապահովում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:*

Այսպիսով, ստացվում է որ արդարադատության նախարարությունը Կառավարության այն լիազորված մարմինն է, որին հիշյալ օրենքով վերապահված է Կառավարության անունից հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և իրականացումը ՀՀ-ում: Ուստիև, **առաջարկում ենք** անհիմն կերպով չսահմանափակել ՀՀ արդարադատության նախարարության իրավասությունները, և Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացը և դրանից բխող այլ գործառույթներ, որոնք նախատեսված են Նախագծով, շարունակի իրականացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ Նախագծով նախատեսված վարչապետի աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի և մոնիթորինգի վարչության փոխարեն:

2. Նվազեցվում են տեղական ինքնակառավարման մարմինների դերը կոռուպցիայի դեմ պայքարում, այդ թվում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման հարցում:

Մասնավորապես, հակակոռուպցիոն քաղաքականության գործունեության հետ կապված հարաբերություններից դուրս են մնում տեղական ինքնակառավարման մարմինները, քանի որ Նախագծով դադարեցվում են Հայաստանի համայնքների միության անդամակցությունը: Ավելին, Նախագծով Խորհրդի կազմում ներառված չէ նաև ներկայացուցիչ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից: Կոալիցիան անընդունելի է համարում կոռուպցիայի դեմ պայքարում տեղական ինքնակառավարման մարմիններին շրջանցելը: Անշուշտ, այս տեսանկյունից, իրավացիորեն հարց է առաջանում, թե որոնք են այն սահմանադրական և օրենսդրական էական փոփոխությունները, որոնք տիմերի դերը նվազեցնելու անհրաժեշտություն են առաջացրել: Հետևապես, կարծում ենք, որ Հայաստանի համայնքների միությունը, որին անդամակցում են Հայաստանի Հանրապետության համայնքները, պետք է ներկայացված լինի Խորհրդում և լսելի դարձնի նաև տեղական ինքնակառավարման մարմինների ձայնը՝ կոռուպցիայի դեմ պայքարում: Ուստիև, **առաջարկում ենք** Հայաստանի համայնքների միության իր համաձայնությամբ հատկացնել 1 տեղ:

3. Նվազեցվում են ՔՀԿ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարում, այդ թվում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման հարցում:

Նախագծով դադարեցվում է 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո սահմանադրական մարմնի կարգավիճակ ունեցող Հանրային խորհրդի անդամակցությունը:

Այսպես, եթե Վարչապետի աշխատակազմը սույն Նախագծի ընդունումը հիմնավորում է օրենսդրական և սահմանադրական էական փոփոխություններով կամ կոռուպցիայի դեմ պայքարը ուժեղացնելու և արդյունավետ համակարգելու հակակոռուպցիոն քաղաքականությամբ, ապա առնվազն անհիմն է հակակոռուպցիոն քաղաքականության հարաբերություններում դադարեցնել մի մարմնի մասնակցությունը, որը ունի սահմանադրական կարգավիճակ, որի 45 անդամներից 15-ին 2018 թվականի սեպտեմբեր ամսին նշանակել է ՀՀ վարչապետը և այդ մարմնի լեգիտիմությունը կասկածի տակ չի դրվել: Ցավալի է նաև, երբ Վարչապետի աշխատակազմը իրավական ակտը նախագծելիս հաշվի չի առնում այն մարմինների կարծիքը, որոնց անհիմն կերպով, առանց նախապես քննարկման դուրս է հանում հակակոռուպցիոն քաղաքականության հարաբերություններից: Ընդ որում, նկատի ունենալով Հանրային խորհրդի կառուցվածքը, այն հաջողությամբ կարող է հանդիսանալ Կառավարություն-ՔՀԿ կամուրջ: Հետևապես, **առաջարկում ենք** Հանրային խորհրդին Խորհրդում իր համաձայնությամբ հատկացնել 1 տեղ:

Կառավարություն-ՔՀԿ կայուն երկխոսության ապահովման և որպես կամուրջ հանդես գալու օղակ է նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, որը միավորում է շուրջ 90 ՔՀԿ-ների Երևանից և մարզերից: Կրկին անգամ հիմնավորված չէ այն մոտեցումը, որ առանց Կոալիցիայի հետ քննարկման նախագծվում է Կոալիցիայի անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ իրավական ակտ: Կոալիցիան իր ստեղծման պահից՝ 2014 թվականից, հանդիսանում է հակակոռուպցիոն պայքարի առաջամարտիկներից, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոալիցիայի կողմից ճանաչվել է հակակոռուպցիոն պայքարի հիմնական խաղացողներից:

Կոալիցիան այժմ էլ հանդիսանում է Խորհրդի անդամ՝ մշտական հիմունքներով և կանգնած է Հայաստանում վերջին տարիներին իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների ակունքներում: Մասնավորապես, Կոալիցիան Հայաստանում նախաձեռնել և ներդրել է այնպիսի կարևորագույն հակակոռուպցիոն ինստիտուտներ, ինչպիսիք են՝

- Հայաստանում ապօրինի հարստացման քրեականացումը, ՀՀ քրեական օրենսգրքում լրացվել է 310.1 հոդվածը.
- Անկախ հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի՝ կոռուպցիայի կանխարգելման մարմնի ստեղծումը, ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը.
- Ազդարարման ինստիտուտի ներդրումը, ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքը.
- Պետական գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը, ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը և նորմը ամրագրվել է Օրենքի 28-րդ հոդվածում:
- Փոփոխություններ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող գույքի և եկամուտների հայտարարագրերի համակարգում.
- Ներկայացրել է 100-ից ավել առաջարկություններ բիզնես ոլորտում, որոնց մեծ մասը ընդունվել և կատարվել է:

Բացի այդ, սույն թվականի հունվար ամսին ներկայացրել է փաստարկված կարծիք-դիրքորոշում և 100-ից ավել առաջարկություններ 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի վերաբերյալ, որոնք հասանելի են այստեղ. https://armla.am/40874.html:

Ի լրումն նշենք, որ Կոալիցիայի ջանքերի արդյունքով Հայաստանում առաջին անգամ սույն թվականի ապրիլի 17-18-ին կազմակերպվեց հակակոռուպցիոն միջազգային

փորձագիտական համաժողով, որին մասնակցում էին հակակոռուպցիոն ոլորտի միջազգային և ազգային փորձագետները, հակակոռուպցիոն գործառույթներ ունեցող ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչներ, ՔՀԿ-ների, բիզնեսի և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 200-ի: Միջոցառումը կազմակերպվել էր ՀՀ կառավարության, ի դեմս՝ Արդարադատության նախարարության և այլ գործընկերների հետ համագործակցությամբ: Միջոցառման արդյունքները ամփոփվել են և առաջիկայում կներկայացվեն իրավասու մարմիններին:

Հետևապես, հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, ըստ որի՝ *«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ,* ***քաղաքացիական հասարակության,*** *ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում* ***ակտիվ մասնակցությանը նպաստելու համար*** *և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար»*, **առաջարկում ենք** Կոալիցիային Խորհրդում իր համաձայնությամբ հատկացնել 1 տեղ, իսկ մյուս 4 ՔՀԿ-ներին ընտրել մրցութային կարգով՝ հաստատված չափորոշիչների հիման վրա:

4. Խորհրդում հասարակական կազմակերպություններին հատկացված տեղերը

Նախագծով առաջարկվում է Խորհրդին անդամության համար ՀԿ-ներին նախատեսված տեղերից 2-ը հատկացնել բիզնեսին: Սույն կարգը գործում է նաև հիմա՝ գործող իրավակարգավորումների շրջանակում: **Առաջարկում ենք** հիշյալ 4 տեղերը նախատեսել բոլոր ՀԿ-ների համար՝ չընդգծելով բիզնես ոլորտի ՀԿ-ներին: Առավել ևս, որ Նախագծով անդամների շրջանակից դուրս է մնացել ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչը: Նշենք, որ չափանիշներին համապատասխանելու դեպքում ոչ միայն բիզնեսի, այլև՝ մյուս ոլորտները ներկայացնող ՀԿ-ները ևս կարող են դիմել և անդամակցել Խորհրդին:

5. Նախագծով Խորհրդի կազմից դուրս են մնացել ընդդիմադիր խմբակցությունները:

Նախագծով նախատեսված չէ կարգ, որով Խորհրդի աշխատանքներին կներգրավեն ընդդիմադիր խմբակցությունների ուժերը: Ի լրումն, Նախագծով նախատեսված է, որ

արտախորհրդարանական ուժերը **ևս կարող են մասնակցել, բայց չունեն անդամի կարգավիճակ:** Գտնում ենք, որ Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունները պետք է անդամակցեն Խորհրդին մշտական հիմունքներով, քանի որ, ենթադրվում է, որ այս հարթակում քննարկվելու են Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության կարևոր ուղղություններ, որոնք պետք է ընդունվեն բացառապես հանրային շահի և կոնսենսուսի հիման վա: Հետևապես, այս տեսանկյունից կարևոր է բոլոր դերակատարներին մեկ հարթակում հավաքելու ՀՀ վարչապետի աշխատակազմի գործելաոճն ու մոտեցումը: Իհարկե, Նախագծով Խորհրդի կազմում ներառված է ԱԺ երկու մշտական հանձնաժողովի նախագահներ, սակայն նրանցից միայն մեկն է, որ ներկայացնում է ընդդիմադիր ուժ: **Առաջարկում ենք** Խորհրդում իրենց համաձայնությամբ հատկացնել 1-ական տեղեր ԱԺ ընդդիմադիր խմբակցություններին, 1 տեղ՝ Պետահիրավական հանձնաժողովին:

6. Խորհրդի կազմում ընդգրկվելիք հասարակական կազմակերպություններին առաջադրվող չափանիշները:

Նախագծով ներկայացվում է Խորհրդի կազմում ընդգրկվելիք հասարակական կազմակերպություններին առաջադրվող չափանիշները, ըստ որի.

«7. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն հասարակական կազմակերպությունները, որոնք՝

1) ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձ՝ վերջին հինգ տարիների ընթացքում.

2) որոնց կանոնադրությամբ որպես նպատակ ամրագրված է հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվելը.

3) կներկայացնեն միջազգային կազմակերպությունների հետ հակակոռուպցիոն ոլորտում իրականացված առնվազն 3 ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:»

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Խորհուրդը հավակնում է հանդես գալ հակակոռուպցիոն քաղաքականության հարաբերությունների քննարկման հիմնական հարթակներից, կարծում ենք, որ առաջադրվող չափանիշները բավարար չեն պրոֆեսիոնալ հասարակական սեկտորի ներկայացվածություն ապահովելու հարցում:

Այսպիսով, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, գտնում ենք, որ Խորհրդում պետք է ընդգրկվեն հասարակական սեկտորի այնպիսի ներկայացուցիչներ, ովքեր ունեն լուրջ մասնագիտական կարողություն, հանրային քաղաքականությունների մշակման և դրանք կառուցողական երկխոսության միջոցով հաստատելու փորձառություն, ինչպես նաև կարող են

Խորհրդի քննարկմանը ներկայացնել փաստարկված առաջարկություններ՝ փորձագիտական հենքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք Նախագծով սահմանված չափանիշներին ավելացնել նաև ստորև թվարկվածները.

1) **Վերջին հինգ տարիների ընթացքում հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 3 հանրային քաղաքականությունների մշակման/բարելավման փորձառություն և դրանք իրավասու մարմինների կողմից հաստատելու/ընդունելու մասին տեղեկություն.**

2) **Վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային կառույցների հետ իրականացված առնվազն 2 ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործընկեր միջազգային կազմակերպության դրական եզրակացություն (գնահատական).**

3) **հակակոռուպցիոն միջազգային ցանցերին մասնակցության ու անդամակցության վերաբերյալ տեղեկատվություն.**

7. Խորհրդի անդամի իրավասությունների ավելացում:

Կարևորելով Խորհրդի յուրաքանչյուր անդամի իրական ներգրավվածությունը և լսված լինելու իրավունքը, **առաջարկում ենք** Նախագծի 13-րդ կետով նախատեսված Խորհրդի անդամների իրավասություններին ավելացնել ստորև թվարկվածները.

1. առաջադրում է օրակարգ կամ դրանում ներառվելիք հարցեր.

2. իրականացնում է սույն կարգից բխող գործունեության հետ կապված հարցումներ:

8. Խորհրդի կազմը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ-ում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված համակարգ և հակակոռուպցիոն գործառույթներ իրականացվում են տարաբնույթ մարմինների կողմից, առաջարկում ենք Խորհուրդը ձևավորել հետևյալ կազմով.

- Հայաստանի Հանրապետության վարչապետ (Խորհրդի նախագահ)
- Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ
- Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար

- ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մասնագիտացված մարմնի նախագահ (համաձայնությամբ)
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (համաձայնությամբ)
- Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության պետ
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններից մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Պետաիրավական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ).
- Հանրային խորհրդի մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հայաստանի համայնքների միության մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
- Հասարակական կազմակերպությունների չորս ներկայացուցիչ (համաձայնությամբ),

9. Խորհրդի նիստերին երրորդ կողմերի մասնակցությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով կրճատվել է Խորհրդում պետական մարմինների մասնակցությունը, **առաջարկում ենք** Նախագծով սահմանել, որ Խորհրդի նիստերի օրակարգերում ընդգրկված հարցերից ելնելով, նիստերին հրավիրվում են իրավասու պետական մարմինների ներկայացուցիչները: Օրինակ՝ պետական գնումների ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության հարցերի քննարկման համար կարևոր է ապահովել ՀՀ ֆինանսների նախարարության ներկայությունը, նույնը վերաբերում է նաև առողջապահության, կրթության նախարարություններին, կառավարությանն առընթեր այլ մարմիններին (ոստիկանություն, պետական եկամուտների կոմիտե), սահմանադրական մարմնի կարգավիճակ ունեցող ինստիտուտներին (Մարդու իրավունքների պաշտպան) և այլն:

10. Խորհրդի նիստերին քննարկումների կազմակերպումը:

Առաջարկում նաև նախատեսել, որ նիստերին մասնակցող յուրաքանչյուր ոք, անկախ Խորհրդում իր կարգավիճակից, իրավունք ունի մասնակցել քննարկումներին, հայտնել կարծիքներ:

11. Խորհրդի նիստերին ակտիվ մասնակցության խթանումը:

Առաջարկում ենք Խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ, Խորհրդի նիստի անցկացման վայրի, ժամի, օրակարգի (առկայության դեպքում՝ կից նյութերի) մասին տեղեկությունը հրապարակել և հնարավորություն ընձեռել բոլոր շահագրգիռ կողմերին գրանցվել և մասնակցել Խորհրդի նիստերին:

12. Խորհրդի նիստերի հեռարձակումը և լուսաբանումը:

Առաջարկում ենք Խորհրդի գործունեությունը ուղիղ հեռարձակել և ապահովել դրանց լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից՝ նիստերի դահլիճում:

13. Վիճակահանության անցկացումը:

Նախագծով նախատեսված է, որ Խորհրդին անդամության նպատակով հինգից ավելի հասարակական կազմակերպությունների դեպքում (եթե նրանց հայտերը համապատասխանում են անդամության համար սահմանված չափանիշներին) հայտ ներկայացրած կազմակերպությունների մասնակցությամբ անցկացվում է երկրորդ փուլը՝ վիճակահանությունը:

Առաջարկում ենք չնախատեսել վիճակահանության անցկացումը, քանի որ ընդունելի չէ հակակոռուպցիոն քաղաքականությամբ զբաղվող մարմնում քաղաքացիական հասարակությանը ներգրավվել վիճակահանության արդյունքների հիման վրա: Վերջիվերջո, վիճակահանությունը՝ իրավական կատեգորիա կամ մեխանիզմ չէ: Գտնում ենք, որ ՀԿ-ների ներգրավման գործընթացը պետք է հիմնվի հստակ չափորոշիչների և գնահատման համակարգի վրա: Մասնավորապես, **առաջարկում ենք** յուրաքանչյուր չափորոշիչ *(չափորոշիչների վերաբերյալ մեր առաջարկները ներկայացրել ենք 6-րդ կետով)* գնահատվի և գնահատման ընդհանուր միավորների գումարով որոշվի հաղթողը, այլ ոչ թե՝ վիճակահանությամբ: Օրինակ՝ հակակոռուպցիոն փորձառության յուրաքանչյուր տարվա համար գումարվի միավոր, հակակոռուպցիոն ոլորտի յուրաքանչյուր հանրային քաղաքականության մշակման և ընդունման համար գումարվի միավոր, նույնը գնահատումը իրականացվի մյուս չափանիշների համար ևս: Գտնում ենք, որ այս համակարգով մրցույթը կլինի մասնագիտական և արդար: